

ՊՈԼԿԱՐԻԱ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տարեկան 8 Ֆր.
Վեցամսեայ 4 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ


Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2 Տօլ.
Վեցամսեայ 1 Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵՆ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

rev. Père G. Kalemkérian
tengasce № 4
Michitaris
Vienne

Redaction du Journal
"Ira vounk"
Varna

Редакция на
Вѣстникъ
"Иравункъ"
Варна

Իրաքիւնք եւս չեմ
տրուիր

ԼԵՒԹՕԼՍԹՕ

Ռուսական մտքի ու գրչի հըս-
կան, տիտանը, կոմս Լև Նիկոլա-
յէվիչ Թօլսթօյ, համաշխարհային
սուգ առթեց իր յանկարծական
մահուամբը, Դեռ երէկ էր որ նա
իր կոմսական ապարանքէն, րն-
տանեկան յարկէն, Եսանայա-Պո-
լեանաէն, գագոնի կը հեռանար
իր մտերիմ բժիշկին հետ ու կը
ժաշուէր անշուք մենաստան մը
ապրելու համար իր կեանքի մը-
նացորդը այնպէս ինչպէս ինք
յանձնարարեք էր մարդկութեան
Հոն անշուքեան մէջ նա իր
մահկանացուն կնքեց 83 տարե-
կան, բայց անոր մահուան քօթը
ամենհասարակ մը տորածեց ամ-
բող Ռուսաստանի մէջ, Բազմա-
պետութիւնները սուգ յայտա-
րարեցին, վարժարանները և հա-
մալսարանները դասերը դադարե-
ցուցին, ուսանողները ամբողջ Ռու-
սաստանի մէկ զապանակէ աղղը-
ւածի նման, դուրս պոռթկացին
իրեց գոսարաններէն ու պողո-
տաներու վրայ լեցուած հոյակապ
ցոյցեր կատարեցին Յետեւ յի-
շատակ, երգելով Աւեն քաղաքի
մէջ ոստիկանութիւնները հազիւ
կարողացան զսպել սգակիր ուսա-
նականութեան և ժողովրդեան ժը-
խորը, Թօլսթօյի գրչին տակ աղղ-
չափ ասպնտուած թագապիր գը-
լուխները իսկ չի կրցան անտար-
բեր մնալ ու չի յայտնել իրենց
համակրութիւնը ու վիշտը այդ
մտքի հակաին մահուան առթիւ-
կայսրէն սկսած ամբողջ իշխանա-
ւորները, պետական, քաղաքակա-
յին ընկերական ու բարեգործա-
կան մարմինները ու հաստատու-
թիւնները վշտակցական բիւրա-
ւոր հեռագիրներ տեղացուցին
կոնսուլի Թօլսթօյին, հանգուցե-
լոյն կնքել, որ քանի մը օր առաջ
իր ամուսնոյն յանկարծական ան-
յայտացումը ողբալէ յետոյ անոր
ցուրտ գիակը գրկելու անողորմ
հարկին աակ կը գտնուէր այժմ:
Միայն Ռուս եկեղեցւոյ Սինո-
դըն էր որ այս համաշխարհային
սոգին հանդէպ անկարեկիր գըտ-
նուեցաւ և արգիլեց կրօնական

արարողութիւն կատարել դարուս
այդ մեծագոյն փիլիսոփային ա-
կենդան գիակին վրայ, վասնզի
բանագրած էր անգամ մը զանի
և Ուղղափառ եկեղեցիէն արտաք-
ուած, անոր համար որ Թօլսթօյն
ամէն առթի մէջ չէր վարանած
կղերին կեղծիքները, կրօնական
մոլեռանդութիւնները և հակա-
ւետարտական սեթեւեթները
ձագկելու, խարանելու Բայց ու-
րախալի է որ հայ եկեղեցին իւր
անկախութեան և քրիստոնէական
լայն հայեացքներուն շնորհիւ չի
վարանեցաւ իր պարտքը կատա-
մելու հանդէպ այն մեծ քրիստո-
նէին որ քրիստոնէութիւնը, բա-
րութիւնը և անմեղութիւնը ըմ-
բռնած էր ճիշտ նազովրդեցիին քա-
րուած և իր ունեւն օրինակովը
ցոյց տուած ձևով:
Դեռ մեր յիշուածներէն չեն վը-
րիպած այն համաշխարհային հա-
մակրական և գնահատման ցոյ-
ցերը որ ուղղութեան աշխարհի
ամէն կողմերէն ասկէ երկու տա-
րի առաջ, Թօլսթօյի 80-ամեայ
յուբիլեանին առթիւ, Հանուր աշ-
խարհ Թօլսթօյն ճանչցաւ իրր գը-
րականութեան հակայ և բարոյա-
կան մեծ վաղապետ:
Իր բարոյախօս ու քրիստոնէայ
Թօլսթօյի վաղապետութիւնը կը
կայանոր սակզբունքին մէջ «Աս-
տուծոյ որքայութիւնը մեր ներ-
քնէն է, նա իր բոլոր էությունները
հակառակ է զինուորութեան և ոչ
մէկ կերպով չէր ներքեր աղգերու
մէջ պատերազմին, ստոր ոճրա-
գործութիւն և եղբայրասպանու-
թիւն կը համարէր զայն, չէր նե-
րէր նաև ձրիակերութեան, ասոր
համար կը քամահէր, կը պար-
սաւէր թագապիրներէն սկսեալ
աղիւտականութիւնը կղերականու-
թիւնը և կալուածատիրութիւնը
այլ կը յանձնարարէր որ ամէն
մարդ գործէ, երկիրը մշակէ, իր
ապրուստը այդ կերպով հայթա-
թէ, վերջապէս Թօլսթօյ գէմ էր
արդի կարգ ու սարքին ու պէ-
տական դրութիւններուն, և կը
հանուածէր զանոնք անվերապա-
օրէն Այս պատճառաւ Ռուսիոյ
սարքունիքը և պետական շրջա-
նակները իրմէ շատ չէին ախոր-

ժեր, բայց միևնոյն տեսն անոր
գրիչը ու լեզուն արգելքի տակ
ալ առնել կը զգուշանային, ակ-
նածելով անոր տիեզերական հա-
բաւէն և անհուն ժողովրդակա-
նութենէն:
Վերջապէս ամէն դարու տըր-
ուած չէ Թօլսթօյներ ծնել, բայց
այնոր անհամար գրուածքները
որոնք մեծաւ մասամբ ամէն լեզուէ
թարգմանուծ են, պիտի ապրեցը-
նեն զինքը երկար դարեր, Եւ
մենք կը փակենք անոր յիշա-
տակին նուիրուած այս տողերը
գոչելով՝
«Յիշատակն արդարոյն օրհնու-
թեամբ եղիցի»
Յ. Պուրպիք

ՍՈՍԿԱՆԻ ԱՄԲԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Ստորե կը հրատարակենք մէկ սըր-
տաթուղբ բողոքը Կովկասահայոց վա-
ղածանօթ հրապարակագիր-գործիչ-
ներէն Նուր-Խաթի Խմբագիր Տ. Սպան-
դար Սպանդարեանի, որ իր նիւթական
կարողութիւնը և իր ֆիզիքական ու
մտաւորական ուժը ամբողջ 25 տարի
տրամադրելի ըրած է հայ ժողովուրդի
վարդապետ և աղագային իրաւունք-
ներու պաշտպանման, և վերջապէս դեռ
3-4 տարի առաջ ուժասպառ ետ քա-
ջուած է հրապարակէն այն արդարա-
ցի ակնկալութեամբ թէ իր մատուցած
ծառայութիւնը յաւելտ պիտի գնահատ-
ուի աղգէն: Այլ աւանդ, այդ յարգելի
հրապարակագիր-գործիչը իր այս հրապա-
րակային բողոքով հակառակը կապա-
ցուցանէ, թէ Դաշնակցականները զինքը
սպաննել վճարեն անյուր ամբաս-
տանութեամբ մը, զոր չեն յայտնել և
միջոց ալ չեն տար ամբաստանալին
ինքզինք արդարացնելու և պաշտպա-
նելու:
Մոլեռանդ հաւատաքննիչներէն չը
տեսնուած և Հանկթիմուրի, ձէնկիզ-
խանի վայրագութիւններուն մէջ անօ-
րինակ այս բարբարոսութիւնը Դաշ-
նակցական շեմերու ճակատին նոր ա-
րատ մը կուգայ աւելցնել: Կը կար-
ծենք թէ այլևս հայ ժողովուրդը չպի-
տի կրնայ հանդուրժել որ իր բաղմամ-
կայ մէկ երախտաւորը, որպիսին է Ս.
Սպանդարեանը, ամբաստանութեամբ
մը, առանց դարկ ու դատաստանի,
բարոյապէս ու անձնապէս սպաննելու
երեսուն տարուան մէջ Կովկասի ան-
ցուղարմերուն քիչ շատ ծանօթութիւն
սանցող ոչ մէկ հայ անհատ կրնայ ե-

րևակայել թէ Ս. Սպանդարեան մը աղ-
գային կամ հանրային շահերու դաւա-
ճանող մը ըլլայ: Շատ շատեր տա-
կաւին չեն մոռցած Նուր-Խաթի այդ
խմբագրապետին այն ծափահարելի քա-
ջարտութիւնը զոր ցոյց տուաւ ուսս
կառավարութեան դէմ, Կովկասահա-
յոց եկեղեցական կալուածներու դրաւ-
ման միջոցին, մինչ շատ մը աղատա-
կան ու յեղափոխական կարծաւանք
քննող համակերպում մը և թոյլ վե-
րաբերում մը ցոյց տալէ դատ ոչինչ
կրնէին: Սպանդարեանն էր որ իր այդ
անվերել պաշտպանութեանը համար
ենթարկուեցաւ բանտի, աքսորի և այլ
զրկանքներու ու տառապանքի, և
սիրարօժար տակաց անոնց, առանց
նշանախնայ մը չեղերու իւր գաղափա-
րէն և աղագային իրաւանց պաշտպանի
դերին:
Նա չի չիջաւ իր բաղմամտիս օրա-
թերթը ապրեցնելու համար դրամ մու-
րաւու, այլ իր անձնական միջոցներով
սոկաց և տարաւ դայն ամբողջ 25 եր-
կար տարիներ, կոխ մղելով անքնգ-
հատ իր ընդգրկած գաղափարի հակա-
ռակորդներուն դէմ բայց ազնիւ կոխ-
Չէ այս վեհանձնութիւնը ունեցող և
այս աղգանուէր ոգին կրող ու բարձ-
րագոյն դաստիարակութիւն ստացած
Սպանդար Սպանդարեան մը չի կրնար
ոչ դաւաճան ըլլալ, ոչ ալ լրտես կամ
այլ ինչ:
Եթէ ամբաստանողները ունին ան-
հերքելի փաստեր, քաջութիւնը թող
ունենան նախ վեհ. Կաթողիկոսի նա-
խագահութեան տակ խոսն ատենանի
մը առջև դատի կանչել Սպանդարեանը:
Առանց անկոչմանկալ դատարանի մը
Սպանդարեան մը դատապարտել ու
սպաննել տալ ցած ոճրագործութիւն
է, որ չպիտի ներուի հայ ժողովուրդին
կողմէ դաշնակցական շեփերու:
ԼՍԵՑԷՔ
Թիֆլիս, 1 Սեպտեմբերի
Եւրոպայում լոյս տեսնող հայոց
յեղովոտական մի կուսակցու-
թեան (Դաշնակցութեան) բերան
թերթի վերջին համարում, ինչ-
պէս ինձ տեղեկացրին, տպագրու-
ւած է իմ մասին մի անլուր ամ-
բաստանութիւն:
Տպագրական մուրի մէջ թաթա-
խ ծապունգով միանգամայն ուրաւ
ոչ չացրած է իմ մէջ մարդը, Հայթ
սեւացրած է հայութեան աշխար-
հում պարզած իմ դրօշակը «նոր»
-Դարձր, որը իմ զինակիցներին
հետ միասին բայձր բռնած տա-
րել եմ մինչև վերջը հալածանքի
բանտի, հողմի և փութորթի միջ-

ընդ, և ձեռքից բաց չեմ թողել: խաչ է կանգնեցրած իւր ամբողջ հոգով համոզմունքի, գաղափարի համար մարտնչող հրապարակախոս գործչի վրայ: այդ սև խաչի վրայ գամւած է Յուդան իր անճոռնի և ողորմելի դէմքով:

Յայտնի է, որ մահապարտին է պատկանում վերջին խօսքը, բայց իմ անգուժ և խստասիրտ գառաւորները զկում են ինձ այդ իրաւունքից, նրանք յայտնում են ի լուր աշխարհի որ

«Իրողութիւնը տարաբաղդաբար անժխտելի է եւ ժխտելու բոլոր փորձերը կը ջախջախին անողորմ փաստերով: և այդպիսով ինձ սև խաչի վրայ գամելու յետոյ, հըրաւէր է լինում սպանել ինձ:

Հարցնում եմ, ի՞նչու պէտք է սպանել հոգիս հանելուց, ինձ կախելուց յետոյ մարմինս:

Եւ խորապէս ցաւում եմ, որ ինձ հետ այդպէս վարող յեղափոխականները Հայ եւ Ներսիս է: որ այդ մարդիկ չեն ճանաչում ինձ և չեն իմանում ում են սպանում:

Ես այն կարծիքին եմ, որ իւրաքանչիւր կուսակցութեան օրգանի ամբաստանութեան, կուսակցութեան կողմէն արած յայտարարութեան պատասխանատու են բոլոր շէֆերը, որոնք էլ որ գտնուում լինեն նրանք: Ինչու են շտապում ինձ սպանել տալու և ո՞ւմ են վախեցնում չէ՞ կարելի որ մի փոքր սպասեն ես նրանց հետ գործ ունեմ:

Իսկ այժմ, այս իմ գլխի վրայ դառնում եմ դէպի նրանց, որոնք անձամբ ինձ չեն ճանչնում, որոնք կարող են կասկածանքի մէջ ընկնել: և բաց ճակատով ասում, «Լսեցէ՛ք զեռ գոյութիւն չունի այն հաստատութիւնը, դեռ չէ ծնւել այն մարդը, որ կարողաւար պատանշաններով թէ պաշտօններով, փողով-արծաթով թէ երկաթէ չղթաներով ընկնել ինձ և ոչնչացնել այն միտքը այն հոգին, որ այս թէ այն ձևով, կաշկանդւած թէ ազատ արտայայտւած է իմ հրապարակասական գործունէութեան մէջ սկսած 1872-1873 թւականներից մինչև օրս: Այս էլ ես այն աստաւածներին եմ երկրպագում, որոնց երկրպագել եմ իմ պատանելութեան, ուսանողութեան օրերից:

Երկար տարիների փորձից գիտեմ այլ և անձամբ վայելել եմ հայի չգիտութեան, և նախանձի: Կոյր թշնամութեան ստեղծագործող զօրութիւնը, բայց և այնպէս այդպիսի հրէշաւոր ամբաստանութեան ես չեմ սպասել:

Ի՞նչ է՞ չարախօսութիւնների, ետեւիցս արտո՞ք բարաստանքի վերայ ուշք չեմ դարձրել: անձնական յարձակումների սովորս բարձր չեմ պատասխանել լուր եւ և

համբերել, բայց այդպիսի մի ամբաստանութիւն, զրպարտութիւն ես տանել չեմ կարող և իրաւունք չունեմ: Պրաւն-Պրոսական պատերազմի վերջում գումարւած ազգային ժողովում գեներալ Տամպլ ողբալով Քրանսիա կան զօրքի պարտութիւնը և գրութեան ծանրութիւնը, բացականչեց՝ toute est perdu hors l'honneur Ամէն բան վրայ տւի ես հայութեան համար, և կեանքի ապահովութիւնից իսկ շրկեցի ինձ, մնում է ինձ համար միայն իմ բարի անունը, միակ ժառանգութիւնը, որեւ պահում եմ իմ սիրած ազգի, և զաւակներիս համար միթէ՞ այդ էլ են ուզում խել ինձանից, այդ էլ պարտաւոր եմ զոհելու հայութեան Ո՛չ այդ ես չեմ կալող և իրաւունք չունեմ, մանաւանդ որ իմ անունըս արտաւորւած, արտաւորում է և հայութիւնը:

Սմբագիր-Հրատարակիչ «Նոր-Դար» ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ
Յ. Գ. Խոնորհարար խնդրում եմ հեռաւոր երկրներում լոյս տեսնող հայաց թերթերի բոլոր խմբագրութիւններից արտասպել այս իմ գրութիւնս: Այլ և խնդրում եմ նորդարականներից, իմ հրապարակասական գործունէութեան համակրողներից առաւել ևս իմ գիտակիցներից, աշայցել օգնել ինձ դատաքննութեան տալու «անոնք փաւտագերը» և կեղծիքը հրապարակ հոնել աշխարհի առաջ, Նոյն աշակցութիւնը ևս խնդրում եմ ազնիւ և զաղափարական հակառակորդներից, քանի որ այստեղ գործը ամենքին է վերաբերում այդ ճանապարհով և այդ միջոցով կարելի է արտաւորել իւրաքանչիւր գործիչի, ինչքան էլ որ բարձր կանգնած լինի
Ս. Ս.

ԱՄԱՐԱՍՏԱՆԻ ՈՒԹԻՒՆԸ

Իրողակի 5-6 թիւի մէջ տեսնուած ամբաստանութիւնը ահա «Թիֆլիզում» հրատարակող «Նոր Դար» լրագրի (հայ կղերականներ օրգան) նախկին խմբագիր հայ հրապարակախոս Սպանդար Սպանդարեանը 1904 թւի Յունւարից ուտիկանութեան տէպարտմէնտի ագէնտն է և նրացուցակի մէջ գրուած է Ամիրով անուան տակ:

Իր պրովոկատորական գործունէութեան սկզբունք Սպանդարեանը ստացել է միանւագ հաշար բուրլի, իսկ այժմ ստանում է 200 բուրլի ամսական: Սպանդարեանի պարտաւորութիւնն է մտնել հայ յեղափոխականներին:

Տիֆլիսի Ռոյիտ թերթը կը գրէ թէ Սպանդար Սպանդարեան մտադիր է մօտեցնել Բարիզ երթալու և անկէ ալ ժընէվ պատասխանատուութեան ենթարկելու համար Դաշնակցական օւկան Դրոյակի

խմբագրութիւնը վերոյիշեալ զըրպարտութեան համար:

Կովկասի բոլոր մամուլը կոչ կընէ ճշմարտաւէր հայերու որ նիւթապէս օգնեն Սպանդարեանին որպէսզի կարենայ իր դատը յառաջ տանիլ և երեսն հանել բուն ճշմարտութիւնը:

Կ Ո Չ Մ Ը

ԿՏՈԱՍԷՐ և ՈՒԼՍԻԱՍԷՐ
ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Ձեյթունից միշտ աշխատած են ըլալ որքան զինասէր նոյնքան և գրասէր մարդիկ դարել է վեր:

Գրեթէ քառօրէ դար մը առաջ հիմնուած Ձեյթունի կեդր. Վարժարանը նուիրած է բաւական ուսեալ երիտասարդութիւն մը, որ հիմնած էր Միւսթիւն մը տարիներ առաջ, նպատակ ունենալով հետապնդել Ձեյթունի նոր սերունդին և ընթերցասէր հասարակութեան զարգացման և յառաջդիմութեան: Ձեյթունի շրջանաւարտից Միւսթիւնը վերակազմուեցաւ 1908 օգոստոս 24-ին իր նախկին նպատակով այս անգամ աւելի եռանդուն, լրջօրէն շարունակելու այն գործը, զոր սկսած էին տարիներ առաջ:

1910 յունւար 10-ին կազմուած է նաև Պոլսոյ մէջ այս Միւսթիւնի մէկ Մասնաճիւղը, Ձեյթունից: Պոլսեցի և գաւառացի ազգայիններ, նպատակ ունենալով օգնել բարոյապէս թէ նիւթապէս Ձեյթունի Շրջանաւարտից Միւսթիւնի Մասնաշաղարհին:

Արդ, նկատի ունենալով Ձեյթունի Ծ. Մ. Մասնաշաղարհին աղքատիկ հանգամանքը և նկատելով որ Պոլսոյ և այլ հայաշատ կեդրոններու մէջ կան խկապէս Ձեյթունը և անոր յառաջդիմութիւնը սիրող ազգայիններ, հըրապարակաւ և սրտագին կոչ կընենք ամեն կրթասէր անձի, որպէսզի հաճին այս առթիւ իրենց խնկազին օժանդակութեամբ մղում առն սոյն գործին իսկ հեղինակներու խմբագիրներու, գրաւաճառներու մատենադարաններու և Ուլմիասի հասարակութեան՝ որպէսզի ջանան իրենց բարոյական և նիւթական սրտաբուխ օգնութեամբ և նուէրներով քաջալերել սոյն Միւսթիւնի Պոլսոյ Մասնաճիւղը, որով և Ձեյթունի Ծ. Միւսթիւնը:

Կը սիրենք յուսալ թէ Հայ Հասարակութեան բոլոր խաւերուն մէջ անլրսելի պիտի չմնայ կրթութեան և յառաջդիմութեան անունով եղած սոյն յոյժ կենսական կոչը:

Ի պիմաց Ձեյթունի Ծր. Միւսթիւնի Պոլսոյ Մասնաճիւղի Գործադիր Ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ
Յուլի. Մանգրեան Յար. Յաղուպեան (ԿԵԻԲ)

Միւսթիւնի Ձեյթունի հասցէն Ձեռամբ Սալիկ Եղալուպեանի Շրջանաւարտից Մասնաշաղարհին յանձնելի:

Միւսթիւնի Պոլսոյ հասցէն, Դաւաթիա Տէմիր խան Գ. յարկ Ալեթի Գրիգոր Թիւրքմանեան, յանձնելի Ծ. Մ. Մասնաճիւղին:

Նոյն

Մ Շ Ա Կ

Քաղաքական եւ Գրական Օրաբերի (37 տարուան) բաժանորդագիրն է, տարին 30 ֆր. 120 լրջ. - Դիմել
Rédaction du journal "MSCHAK" TIFLIS (Cacase)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Էնզելի, 25 հոկտեմբերի
Պարսկաստանը սնանկ եւ խառնակ դրութեան մէջ է գտնվում: Իրամի կատարեալ սով է, արդիւնաբերութիւնը համարեա կանգնած է: Եւ այս կրիտիկական մօժեշտից տեղեկութիւն չունենալ ձեւացող կենտրոնական կառավարութիւնը օր օրի վթա ձըրիակներն թիւն է աւելացընում, փոխանակ կրճատելու, տընանկներ թիւը փոքրացնելու, ինչով բացատրել այս:

Պարսկաստանի համարեա ամեն գաւառ, ամեն քաղաք խառնակ և վտանգաւոր դրութեան մէջ է գտնվում այժմ: քացի Գիլանի Բաշտ և Էնզելի քաղաքներից, և յոյս էլ չը կայ որ նորմալ դրութիւն կը հաստատվի շուտով: Բայց թէ հրանը այստեղի զինուորական, ժանդարմական և ոստիկանական ձորակեր ծառայողների ահազին թիւը փոքր համարելով՝ այնտե տեղից էլ նորանոր խմբեր է ուղարկում, երեւակայական փոթոշկի առաջն առնելու համար:

Յաւալի ապագայի առաջ ենք կանգնած, երբ երկիրը նրա բաղդը տնօրինողները պատահական և անկիրթ մարդիկ են:

Բոլորովին այլ բան է վազել փախող անկանոն զօրքի ետեւից, որպիսին էր Պարսկաստանինը՝ այս ամբողջ կուր ընթացքում, այլ է երկիրը կառավարել դիպլոմատներն, չը վստահով ընդհանուրի շահերը:

Մայրաքաղաքը վերցնելուց պարլամենտը կազմելուց համարեա անցել է 17 ամիս, և այսքան ժամանակամիջոցում ոչ մի շինաշինարար չէ ձեռնարկվել, չէ կատարվել ժողովուրդը հիասթափվել է «մաշրութայից» — սահմանադրութիւն — ե երկրի մէջ կատարվող բոլոր ոճիւրները նրան է վերագրում: Ամբողջ չը տարբերել կամ գաղափար չունենալով իսկական ազատութեան, սահմանադրութեան մասին՝ կարծում է թէ այդ վարդապետութիւնը Պարսկաստանի նման խառնակութիւն, անտրիա է քարոզում:

Կենտրոնական կառավարութեան սխալ ընթացքը անմիտ գործողութիւնը ծնունդ տուեց քացի բեակցիօններին՝ նու մի մեծ, աւելի ուժեղ դժգոհների զստակարգ, որն ընթացք տալով իր նոր յեղափոխութիւն է առաջացնելու և որի գործողութեանը հաջը թէ դիմանայ Պարսկաստանի՝ այնպէս էլ արկունքամ ու նիւթապէս քայքայված ժողովուրդը:

Որպէս անցեալներն էլ ասել եմ, թէ հրանը վերցվելուց յետոյ չը մշակվեցին սահմանադրութեան համար օրէնքներ, որոնք պէտք է մի ամբողջ անկազմա կերպ երկիր կառավարելու, գործերը զեկավարել և ոչ թէ նախ:

կին բռնապետութեան նման՝ ամեն մարդ իր խելքի եկածով դատէր, ամեն մի պատահական մարդ պատասխանատու պաշտօնի անցնէր, զգարա խաղաղութիւնը քի բազմ լինէր և ե. կիրք այս օրին հասցնէր, կրթութեան ցնդ, փորձառութիւն է հարկաւոր մեզ նման նահապետական ժողովրդին տուն, ուղղութիւն՝ տուն, ուղղութիւն տալու է գործը. անսայթաք տալնորդելու համար:

Վաստաւ և անընդունակ զեկաւորները իրանք պէտք է հեռանան գործից, լանտն երկրի գերագոյն շահերի թէ չէ՝ սա ինչ գործելակերպ է:

Աթոռացաւով բռնված, փռուք ձեռք բերելու անունից տարված մեր այնպիսի սկսած զեկաւորները բոլորովին չեն մտածում և ըմբռնում իրանց դերը. նրանք գիտակցաբար և անգիտակցաբար երկիրը ծախելուն, գրաւելուն ոյթ են տալիս միշտ. երկիրը շրջապատված է աննպատակ պայմաններով. օտարները սպառնում են չը խաղաղվելու զէպքում՝ իրանց առեւտրական շահերը պաշտպանելու համար զօրք մտցնել Պարսկաստան, իսկ մեր կենսաբանական կառավարութեան զեկաւորները միմիայն են փոխում ամեն օր իրանց բարեկեցութիւնը:

«Մարդ չը կայ երկրում» — ասվել է շատ անգամ, և այժմ էլ կրկնում ենք և եղածներն էլ կամ համարձակութիւն չունեն անպէտքներին դուրս չգրտել գործից կամ միմեանց հետ գրամի և այլ հաշով կապված են: Իսկ այս բարբոսի ո՞վ է քննադատում մասսան տնանկը, իրաւագուրկը և այլն:

Մուշահիդ

Մշակ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՐՈՒՄ

Վանի կուսակալ Պէթրի պէլը Պոլիս կանչուեցաւ. բայց չի գետցուիլ թէ ինչ բանի համար:

Այդ պաշտօնավարութեան առաջին շրջանին բաւական ուղղամտութեամբ կը վարուէր տեղական հայ և ոչ-հայ ժողովուրդին հետ: Բիւրքերու առաջակութիւնները զսպելու և յարկաւորութիւնները սահմանադրապէս կուսակալին մը վախել էին: Բայց վերջերս իր ընթացքը բոլորովին փոխուած էր: Հանրաժանութի կեղծքի քիւրտ Բէքը Հիւսէյին փաշան Պարսկաստանէ վերադառնալուն օրերով հիւր մնաց կուսակալին ապարանքը, յետոյ տեսնուեցաւ թէ մէկ կառքի մէջ նստած միասին պտոյտներ կընեն սոնգ. աւելի յետոյ կուսակալը և Հիւսէյինը միասին գաւառները շրջագայութեան ելան. գաղտնի ազդեցիկ Բիւրքերու վրանները ու զանոնք պատեցին իրենց այդպիսի թիւններով: Ձեռք զիտեր թէ ինչ խորհուրդներ յաջան և որոշեցին այդ վրաններուն տակ՝ սա յայտնի է թէ անկէ ի վեր թէ կուսակալին և թէ նա հանգին կազմութիւնը չարափստուեցաւ:

Կիզիքի քիւրտ ցեղապետները այլևս երես առած կամ թեւադրուած սկսեցին իրենց նախկին բռնութիւնները ի գործ դնել հայ և քիւրտ ժողովուրդին վրայ, պահանջեցին նախկին տարապակիակները, որոնք սահմանադրութեան հռչակումէն յետոյ դադարած էին. հողերն կրկին գրաւեցին՝ իսկ առաջակութիւնները ու թաւան հինին չափ և աւելի սաստիկ ըսկան: Այս բոլորին կառավարութիւնը այլևս անտարբեր կը մնար, ինչ որ չէր Պէթրի պէլի պաշտօնավարութեան առաջին շրջանին: Այս փաստը ցոյց կուտայ թէ կուսակալը կեղծքներն նոր հրահանգ էր ստացած քիւրտ պէյերը սիրաշահելու և թերեւս Հայերը չը պաշտպանելու կամ նեղել տալու. կուսակալին այժմ Պոլիս կանչուիլը մեզ տարակոյսի մէջ կը ձգէ, տեսնենք կեղծքնի կառավարութիւնը անոր հետ ինչպէս պիտի վարուի: Իր վերջին պարսաւելի ընթացքը իրեն ծանր պատասխանատուութիւն պէտք է բերէ, եթէ կեղծքներ չէ բռն թելադրել անոր այդ պարսաւելի վարմունքին, որ ամիսներէ ի վեր ընդօրինակութիւնն եղաւ համիտեան ուժերին:

Ա.Ր.Ձ.Ս.Գ.Ա.Ն.Գ. Ա.Մ.Ե.Ր.Ի.Կ.Ա.Յ.Է.Ն

Ձիգալի

Հ. Յ. Դաշնակցութեան շեփեղէն Անիւսին հոս ալ եկաւ, հրապարակային ժողով մը սարքուեցաւ իր կուսակիցներէն, նորիկ հիւրը խօսեցաւ համերաշխութեան վրայ, ժողովուրդը պահ մը զինք ըսելէ յետոյ, երբ նա եղբարեաց թէ պէտք է համերաշխութեան յանձնախումբ մը կազմուի որ նաեւ հանգանակութիւն ընէ Ռուսահայոց ի նպատակ և բողոքի միջոցով մը կազմէ ուսու կառավարութեան բռնութիւններուն դէմ, համերաշխութիւնը սպառնացաւ ժողովուրդին և ունկնդիրներէն չեղոք մարդիկ խօսք տանելով սա պատասխանները տուին անոր:

«Ձեր առաջարկած յանձնախումբը համերաշխութեան համար ոչինչ չի կըրնար ընել. դուք զացէք ակիւր մարքեցէք չորերը ակիւրէն պղտորուած են, զացէք կեղծքները համերաշխացուցէք, մենք չենք կրնար առանկ յանձնախումբի մը մասնակցել: Այս վարկեանիս իբր ժողովին առնականութիւնը կեցող Ձիգալը էր որ դեռ չաբաժ մը առաջ հրապարակային ժողովի մը մէջ կը պիտար թէ «ինչ որ ալ ըլլայ մենք Ռամկավար անուն խմբակի հետ չպիտի համերաշխուինք, և այս խօսքերով կը թիւնաւորէր ձեր ոչխարամարտ հեռեկանները: Նոյնպէս պարոն Անիւսին, ըսաւ խօսքը, դուք չէիք որ անցեալ տարի Պոլսոյ Պատրիարքարանին մէջ, հայ ազգին էն բարձր մտաւորականներուն դէպի համերաշխութիւն յորդորներուն ու խնդրանքներուն ի պատասխան ըսիք թէ «Մենք պղտորվել չենք ուզում»: Կըրկին դեռ քանի մը օր առաջ ձեր մէկ կարեւոր ընկերը Ձիգալն «մենք ձեզ առում ենք» կը պիտար Հնչակեաններու և Ռամկավարներու երեսին:

«Բանի որ դուք պղտորվել չեք ուզում, դուք մեզ ասում եք, ալ ինչ համերաշխութիւն է որ կը փնտռէք մեզ հետ հայ ժողովուրդը խաբելու նոր մեծ մըն է այս: Դուք կատէք հայրենիքին տառապանքով տապալուողները, բայց չէք առեր մեր մայրերը, քոյրերը և եղբայրները սպաննողները, պղծութիւնը ու մեր օճախը քանդողները և համերաշխութեան նոր դաշինք կը կնքէք

Կիրիկիայ աղէտին յաջորդ օրը հայ կախուողներու հանդէպ, դաւելով Ազգ. Պատրիարքարանի ջանքերուն և ազգեցութեան դէմ: Այս ինկածութիւններէն վերջ դէռ երես ունիք ժողովուրդին ներկայանալու. չէք ամչնար դուք:

Ահա այս և ասոր նման խօսքեր արձագանգեցին ունկնդիրներու նստարաններէն:

Ժողովրդեան այս զայրոյթին հանդէպ բեմին վրայ կեցող Անիւսին ու Ձիգալն ամբած ու պղտկեցած մնացին, և ժողովուրդը ցրուեցաւ սրտի անհուն խռովով մը, որով կատարելագէտ վրժած եղաւ Անիւսինին ծրագիրը: 28 հոկտ. 910 Դիսող

ԱԶԳԱՅԻՆ

Կիրիկեանց սեղիկութիւններ

Սեբաստիոյ Սոմ. երեսփոխան Տօք. Ն. Տաղաւար՝ ան Սեբաստիոյ նահանգը և Կիրիկեան պտղեւնով վերադարձին հաղորդած է Բիւզանդիոնի խմբագրին կարգ մը անկեկութիւններ. որոնցմէ կը քաղենք հետեւեալները:

Տօք. Տաղաւարան իր այդ այցելութիւններէն օգտուելով, Բարեգ. Ընդհ. Սիւրիան նոր մասնաճիւղեր հաստատել է Սամսոն, Եմասիա և Կարբիւն: Եւրոպիոյ և Սեբաստիոյ մէջ արդէն գոյութիւն ունենալով Բարեգործական մասնաճիւղեր. ժողովուրդը այսքան եռանդ ցոյց կուտայ եղբր որ 10 կամ 20 ոսկի մուտքի տուք վճարելով կանգնակցելու սկսին:

Տօքթօրը Կիրիկիոյ մասին պատմած է թէ Ստանայր մէջ ոգևորութիւնը քաջալերել է, ամէն կողմ շրջութիւններ և վերականգնման փորձեր կը ըլլան և յուսալի է որ մինչև 10 տարի քաջաբը իր կրած նիւթական վնասը կը դարձանէ: Սակայն ցաւով կը յիշէ թէ Տարսուսի մէջ միայն մէկ հայու մը առնալով արդէն, այն ալ Յունաց թալիս մէջ գտնուելուն համար, իսկ Հայոց թալիս բոլորովին մոխրակոյսի վերածուած է, որովհետեւ մէկ կողմէն կազմակերպ և միւս կողմէ կրակի տուեր էրն իւրեքերը:

Չորք Սարգուստի մէջ ալ առեւտրական շարժումը սկսած է. բայց Հաճընի մէջ թշուառութիւնը անսկարագրելի է զրոյս յարգելի տղթօրը. որովհետեւ 5000 Հաճընցի առաջ անդ խողովուրդ են. Գեր. Դաշնակցականներու դաշնակց թուրք եղբայրներէն (1) և 2000 այլք կրներ 20 էն 35 տարեկան մեացած են անոր և անխնամ: Իրբանոց շրջութեան առթիւ ասոնք աշխատած են օրական 2-3 դր, ստանալով Բայց որբանոցը չէ ամբողջացած, որովհետեւ բարեխնամ (1) կառավարութիւնը հակառակ եղած խոստումներուն և որոշումներուն միայն 200 ոսկի տուած է և 250 որբեր այս ամեռ եղանակով այդ դուռ և պատուան շունեցող ԵԱՏԻ-որանոցին մէջ կը դուրդան: Բայց Տօք. Տաղաւարան նախամեծար կը յամարէ այս կուսակալին հաստատած Սոմ. Իրբանոցէն, ուրկէ աղբանոցը գարշահոտութիւն կը բուրէ եղբր և Յոյս կրն մը հակող դուրեր է հայ որբերուն... Ասով ալ կը հասկցուի շնամարտ շարժակառութիւնը այդ մէջոն թուրք կուսակալ ձէմալ պէյին, որ տակաւին երես ունեցեր է Տաղաւարանի զիտակութիւններուն պատասխանելու թէ, եթէ հայ ազգը իր որբերը չի կրնար խնամել, թու իրեն յանձնեն, ինք կը խնամէ: Յոյս կրնէրու գարշահոտ, խնամքով, չէ... Կըրբ որբ պաներ:

Ձեյթունի մասին պատմելով, Տօք. Տաղաւարան ըսեր է Բիւզանդիոնի խմբագրին թէ Ձեյթունի վիճակը խաղաղ է. հետազոտութիւնները դադարած են այլևս, բայց կարօտութիւնը կը տիրէ Ձեյթունի մէջ:

Սիսի մէջ ալ Բարեգործական մասնաճիւղ հաստատուել է. և կարգ մը տեղեր ալ ինչպէս Տէրէնտէ և այլն, փափաք յայտնի ժամանակներ կազմելու, սակայն Տօքթօրը զիտողութիւնը բեր է թէ իրենց անստանալի վիճակը խոյառու չէ մուտքի գումար մը և ամսավճար տալու, ուստի յառաջիկայ տարւոյն յետաձգել է:

Միացեալ Ընկերութիւնը

Անցեալ Գ. Տօք Պոլսոյ մէջ տեղի ունեցաւ Միացեալ Ընկերութեան Ընդհանուր ժողովը. Ուր կատարուեցան նոր զիտանք ընտրութիւն, և ընտրուեցան Ա. Ատենապետ Ստեփանէֆ. Գարանան, Բ. ատենապետ Բոօֆէսօր Յակոբոս Ճէրգեան, Ա. Ատենապետ Սարաչէս Հրեմիւղ. Բ Ատենապետ Ասատուր Հարենց:

Կազմուեցաւ Կրթական գիւան բաղկացեալ Տ. Տ. Յակոբ Պոյաճեանէ, Մարկոս Նաթանեան և Սելբոն Կիւրճեանէ:

Հաշուեքները դիւան Տ. Տ. Մկերտիչ Մանուկեան, Վահան Էսայեան, Յովհաննէս Էսայաշեան, Կոմիտաս Կոթուկեան և Սննդի Տէրուհեան:

Ընկերութեան պիւտէի մասին մանրամասն բացատրութիւններ տրուեցան Տնօրէն ժողովոյ կողմէ. ուր տեսնուեցաւ թէ Ընկերութիւնը ոչ թէ միայն բաց չունի, այլ և անցեալ տարի ենթադրեալ մուտքը կատարելագէտ իրականացնել գատ՝ 823 ոսկի յաւելում կայ: Այս վերջացող տարեշրջանին մուտքը նախորդ շրջանին գրեթէ կըրկին եղած է. պահեստի դումարն ալ 2114 ոսկի բարձրացած է: Միացեալ վարժարանները 70 ի հասած են բայց տեղ տեղ գաւառացիք ծախքին մէկ քառորդը իրենք կը վճարեն եղբր:

Միացեալ Ընդհ. ժողովը ծափահարութեամբ ընդունեց այն տեղեկութիւնը թէ Հ. Բարեգ. Ընդհ. Միութիւնը այս անգամ 300 ոսկի նուիրած է: Նոյնպէս Նիւ-Եօքթի Հայկական Միութիւնը խոստացած է տարեկան 40 ոսկի:

Գիւղատնտեսական ճիւղի մասին Տնօրէն ժողովը բացատրեց թէ Գարնայ և Կիրիկիոյ կողմն մասնագէտներ զրկուած են և հիմա ջանք կը ըլլայ ուսուցիչներ հասցնելու որ ամէն կողմ տարածեն:

Առաջարկուեցաւ շնորհակալութիւն յայտնել Բարեգ. Էֆ. Հալաճեանի որ մնայուն գրամագլուխի համար 300 ոսկի կը նուիրէ և Արամ Էֆ. Եւրոպա գացած է կարեւոր գումար մը հանգանակելու յոյսով: Մարկոսի ընդունուեցաւ այս առաջարկը և վաւերացաւ 1911-1914ի պիւտէին:

Ժողովոյ տնտեսապետ Բոօֆ. Յակոբոս Ճէրգեան յանուն ժողովոյ շնորհակալութիւն յայտնեց Տնօրէն ժողովին, անոր ցոյց տուած գոհացողիչ արդիւնքի մասին: Ահա գործ մը որ արժանի է ամէն բարեսէր ու տոմարի հայու քաջակրթութեան:

Ազգ. Երեսփ. ժողովը

Ուրբաթ օր տեղի ունեցած Ազգ. ժողովը բոլոր լիճաբանութիւններ ունեցաւ կրկին, մասնաւոր Դուրեան տարիարքի հրաժարականը ընդունելու մասին:

Հո, ծիծալելի էր Շարիկեանի լըրբութիւնը Իլմիրի ոճիւրը Վ. Թէքեաւ

նի կամ Ռամկավարներու վերադարձը լուսն առթիւ: Վիճաբանութիւնները տեւեցին մինչև մութ ատեն, երբ ատենապետը քուէ առաջարկեց և որոշուեցաւ վիճաբանութիւնը փակել ու Պատրիարքի հրաժարականին ընդունուելու կամ մերժուելու մասին քուէարկութիւնը կատարել լսողական ուրբաթ օր:

Ազգ. Ժողովոյ այս նիստը թէև զանափակ էր, բայց Դաշնակցական «տղերքը» լեցուած էին բակը, մինչ քուն ժողովուրդէն մարդ չէր եկած, կարծելով որ այդ խնդիրը վաճառքի ալ պիտի բացակայի: Երեսփոխանները երբ կը ցրուէին, մաս մը «տղերք» յարձակեցան Հանքերի երեսփոխան Տօք. Տատուրի վրայ՝ որ կեդրոնի խմբակցութեան կը պատկանէ, և զաւագանի ու ձեռքի հարուածներ իջեցուցին: Յետոյ յայն գուղունութիւնը ընել կը պատրաստուէին Տ. Թէքեանի վրայ, երբ Ժ. Կատիկաներու ներս մտնելը տեսնելով, եւ քաշուեցան ու ցրուեցան: Այս նոր ծեծը անդամ մը ալ կը հաստատեն թէ Դաշնակցական շեմերու խոստումին վստահել չըլլար և անոնց «տղերք» ուժի առջև միայն կը խոնարհին: Ականջը խօսի Դուրեան Պատրիարքին որ իր թուութեամբը լիբերը ալ աւելի լրբացուց:

ՀԱՎԱՍՏԻՍԱԹ

ԹԻԻՐԻԱ

Թրիթիանլարըն ասֆէրիկ մէսէլէսինտէն տօլայը Բուս բաթ-րիգ հանէսինին րուհանի վէ ճիսմանի մէճիլէրի սօն իճթիմատա հիւքիմէթէ պիւր թագրիւր վէ-րիլէսինի թաշիլը գարարա ալ-տը: Պու թագրիլէ Բուս Բաթ-րիգ հանէսին պաշլըճա շու թէք-լիֆէրի իտէյըրքի՝ պու սայէտէ ասֆէր գաշալարըն էօնիւ ալը-նապիլէճէք եանի միւտտէթի աս-ասֆէրիլէի գալթմագ, Բուսլարը ասֆէրիլէ մէքթէպիլէրինէ գա-պուլ իթմէք, րուսթպիլէրին եիւք-սէլթմէսինի գօլայլաթմագ վէ միւտտէթի ասֆէրիլէտէ խրիս-թիանլարըն իսլամ մէգհէպինէ տէօնմէլէրինի եասագ իթմէք:

—Այլանիստա Արնաւուտլար թէքրար հարէքթտէ տիրէր: Պապը Ալի եէնիտէն Արնաւուտլար իլէ մէշղուլ օլմայա մէճպուր օլմուշ տըր: Պու տէֆա հարէքթթ Ալպանիանըն յիմալի գըթանտան պաշլամըշտըր: Պաշլըճա կտթուրիկ Արնաւուտլար չէթալարա թագ-սիմ օլունարագ, տաղլարա չէքիլ-միլէրի վէ ճէպալ: Գանունընը իսթէտիլէրինի պէյան իտէյօր-լար: Պու տաղ գանունը թէքրի մէ օլունան ճէպալ էսկի պիւր գա-նուն տըր: Պու ասըլտըր նէ վէրկի վէնէտէ ասֆէր վէրմէք իսթիյօր-լար, պուլունլէ պէրապէր «Օյ-մանլը տէվլէթինէ սատըգըղ տէյօրլար: Պիւր էհալի վէրկի վէ ասֆէր վէրմէտիքտէն սօնրա տէվ-լէթէ նէ՝ Եօլլէ սատըգ պուլուն-մուշ օլունըր ըմշ:

Քէզ՝ մէքթէպիլիտէ հէր հսլ-տէ թիւրք հուրուֆաթը վէ լի-նանը իլէ տէրս վէրիլմէք իւչին

հիւքիմէթին իճպարը տախի Արնաւուտլարա ֆէնա թէէսիւր իթմիշ տիր: Էլեէվմ Ալպանիա-տա պուլունան ասֆէրիլէրին կէրմ չաղըրըլմասը Պապը Ալի թէէսիւր իթտի: պէլքի եագընտա եէնի-տէն ասֆէր սէվգինէ լիւղիւմ կէօ-րիւնէճէք տիր:

Գարատաղ սինօրը իւզէրինտէ Արնաւուտլար պիւր գաշ միւսա-տէմէշտէ պուլունմուշլար:

Բուհուլչտէ Արնաւուտլար աս-քէր պէօլիւքի իւզէրինէ հիւճուլ իտէրէք, 3 ասֆէր վէ 1 զապիթ թէլէֆ իթմիլչէր: Էրզանիչ գուր-պինտէքի գըշլարա իւզէրինէ տախի հիւճուլ օլունմուշ՝ օրա-տատէ պիւր գաշ ասֆէր ետրէ-լէնմիշ վէ էօլմիւշ:

—Բուս վէ Պուլկար պէյինտէ հա-սըլ օլան իթիլաֆ սայէսինտէ, Սե-լանիկտէն պիւրիլիտիկի իւղրէ, գալկարըն էօնիւ ալընմըշ տըր: Ծու սըրա զայրը Բուս վէ Պուլկար գալկարըն վուգու պուլմայօր:

Մէմուսթա կէօրէ, էկէր հիւ-քիմէթ խըրըսթիանլարըն իտ-գալարըն իթթիֆա վէրմէք վէ թէքրար Պոսնալը մուհաճիլէրի կէթիլիպ եէնիլչտիլմէկէ տէ-վամ իտէր իսէ, Բուս վէ Պուլ-կար չէթալարը պիւրիլչէրէք՝ խը-րիսթիան էհալինին հուգուգընը սիլան/վասիթասը իլէ միւթթէ-ֆիգէն մուհաֆազայա վէ իգթի-գաի հալ ասֆէրէ գարըն տախի ճէնիլչմէյէ պաշլայաճագլար տըր:

Պու պապտա կէչէն հաֆթա Մէճիլիս Մէպուսանտա էքսիլի-լէթ թէշքիլ իտէն ժէօն-թիւրք բուրթիսինին մէպուսլարը վէր-տիլէրի սօն գարար իլէ՝ Մա-քէթոնիստա թէքրար գան տէր-եասը թէշքիլ օլունմասընը թէք-ճիհ իթմիշ օլտուլար: Եանի Պոս-նատան իսլամ մուհաճիլէրի կէ-թիլմէք վէ Մաքէթոնիստա եէրիլչտիլմէք իլիւն հիւքիմէ-թին թէքիլֆի իւղրէ, պիւր պէօյ-իւք մէպուգ թախիս իթտիլէր: Պու գարար եանիլըն սու եէրինէ կազ աթմագ գապիլինտէն օլմաղ-լէ Մաքէթոնիս խըրըսթիանլա-րընտան մաստա ճիվար մէմա-լիքին հէմճինս էհալինին վէ ուֆագ Պալգան տէվլէթիլէրինէ գարըն գալկարա մէյտան օգու-մագ տըր: Ժէօն-թիւրք գօմիլթէ-սինին թաասուպընտան իլիւրի կէշմիշ օլան պու խաթա թիւրք-իանըն թէքագըրօնա վէ միւ-սալէհասընա մանի օլաճաղը շիւր-հէսիլ տիր:

—Թիւրքիւ վէ Պուլկարիւ պէյ-նինտէքի օիւնօր թալիլի մէսէլէսի գօմիլթիւնը մախուս մարիֆէթի իլէ իթմալ օլտըրը վէ կէլէճէք սէնէ պու հուտուտ մէսէլէսինէ քեաճմիլէն նիհայէթ վէրիլէճէկի ճէրիտէլէր եաղիյօր: Թիւրքիլթ մուգալէլէսի միւ-ղէքէրաթը տախի խիթամ պուլ-տըգտան սօնրա, Դօնսօլուլար մուգ-

վէլէսիլէ միւհրիմէրի կէրի վէր-մէք մուգալէլէսինին ագտ ու թանգիլմէնէ տայիւր միւղէքէրէյէ պաշլանաճագ տըր:

Տ Ա Ի Ի Լ Ի Թ Է

Բուսիա իմքէրաթօրը 2ար նի-քօլա հաղրէթլէրինին կէլէճէք սէնէնին իլք գըսմընտա Գարա-տէնիլ թարիգի իլէ Սօֆիայա կէլէճէքլէրի վէ իւչ կիւն գալա-ճագլարը կաղէթալար եաղիյօր-լար, վէ Բուս իմքէրաթօրընըն պու թէշրիֆինէ պուլկար ճէրի-տէլէր բօլիթիգաճա Եիւքսէկ մա-նէլէր վէրիյօրլար:

—Պիւր վագըթտան պէրու չէհ-րիմիլ-տախիլինտէ էմիլիլթի ու-մուսի իլիւլ օլմուշ տըր: Գիւրա հէր հաֆթա պիւրտէն զիյատէ մուգաթէլէ էքսիլ օլմայօր: Պուս տան 25-20 կիւն էվլէլ իթի քի-չի պիւրտէն էօլտիւրիւտի չէհ-րին մէքէլինտէ: սօնրա եէնի մահէլլէտէ 1-2 քիշի աղըր ճա-եարէլէնտիլէր, կէչէն հաֆթա Պապալ Մագսուտը էօլտիւրմէք գաստը իլէ անլընը եալտըլար, վէ պուլարըն ճանիլէրի պու-լունմատը, քէգա բաղաբ ագշամը պէրպէր Արիստօտէլին պըշաղէ գարնընը եարտըլար վէ պու կիւն ճէնապէս գալտըրտը տըր:

Տիւն տախի պիւր թիւրք պիւր էրմէնի գրղըն պիւքիլին իղալէ իթտիլի իլիթիլտի:

Վառնա կիպի ուֆագ պիւր չէ-հիւտէ ազ կիւն շարֆընտա արգա-արգայա պու գատար էինայէթ-լէր վուգու պուլմասը Պուլկար հիւքիմէթինէ նամուս կէթիլ-մէք Պու կիպի հալլէր պիւր նիվ ժանտամա իտարէսինին կէվլէկ-լիկինտէն իլէրի կէլիլ: Ծու հալ-տէ նաշալինի վէ բրօգուրթ է-ֆէնտիլէրին զիյատէճէ տըգգա-թընը վէ զայրէթիլին տալէթ ի-տէրիլ:

—Սօֆիա կաղէթալարըն եաղ-տըլարընա պիւնաէն, Պուլկար վէ Բուս օսմանը մէպուսլար իթթի-ֆագ իթմիլչէր: քէգա պու իթ-թիֆագա պիւր չօգ էրմէնի մէ-պուսլարը տախի տախիլ օլմուշ-լար:

—Բուսիւլը Մասլէնքով նոմ գալթ կէչէն կիւն սօֆիատա թէր-թիպ իթտիլի ալեալթ իլէ հա-վայա ուշմագ թէքրիւպէսինտէ պուլունտու, 2ար հաղիլթլէրի ալիւսի պիւր թագըմ զապիթան վէ էհալի թէմաշա իթթիլէր: Պաղը զապիթլէր տախի Մալնէնով իլէ պէրապէր օթուրուպ պիլզալթ թէքրիւպէտէ պուլընտըլար:

Ո Ձ Գ

Զարգարիք

Ազգային, Դրական և քաղաքական Տարեկան Բաժնեգին 15 ֆր. Դիմել՝ Rédaction du journal „Azk“ 16 Beach St. 4th Floor BOSTON MASS

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՋԱԿԻՐԷ

ՊոիլՏԱՅ	Վալօն 100 քիւօ	14.50/16.45
Արապա	45-80 լիպ.	10.70
ԱՐՔԱ		
Վալօն 100 քիւօ		9.75
Արապա 45-82 լիպ.		6.
ԵՈՒԼԱՅ	արապա	4.02
ՋԱՎՏԱՐ 100		10.50
Արապա		7.
ՖԱՍՈՒԼԻԱ 100 քիւ.		24.75
ՏԱՐԸ	արապա	8.30
ԴՕԼՕՋ	արապա 35-60 լպ.	6.07
ՄԻՍԻՐ 100 քիւօ		9.85
Արապա		7.21
Ֆիթ	100 քիւօ	13.

ՊԱՆԱԼԻԷ

Վառնա բիւցասընտա պաղգալիլէ մալ-լէրին պու կիւնքի ֆիլայթը, ալթըն ֆը-րանք իլէ:	
ԳԱՎԷ	2.60/2.70
Շէֆէլ՝ շէմցէ քէլլէ	92
Շէֆէլ՝ քէմէ սանտըգ—	46.50/47
ԲԻՐԻՆՃ ճէնօլա շուվալը	45.
» Խիլիլիլ »	32.50
» Բիլզոն »	53.
» Ֆիլիպէ »	44/45
ԿԱՋ Պաթուլ Սանտըղը	9.40
» Բիլայան »	6.07
Ջէթիլն ԵԱՂԸ քիւօ	170-190
ԳՈՒՐՈՒ Իւղիւմ	85.
ԵՈՒՐՄԱ	31/39
ԵՈՒՐՄԱ	7.60

ՔԱՀԱՆԱԹ ԿՈՒՋՈՒԻ

Թուլայի հայոց եկեղեցւոյն քահանան հրաժարած ըլլալով տեղւոյն հոգաբարձութիւնը կը խնդրէ ծանուցանել թէ որ քահանան որ կուգէ թուլայի մէջ պաշտօնավարել, թող փութայ իր պայմանները մանրամասնօրէն հաղորդել նոյն եկեղեցւոյ Հոգա-բարձութեան սա հասցեով:

M-r A. Hacion (Roumanie) TULCEA

ՉԷՄԷՆ ՉԷՄԷՆ

Սէնէի սապըգ Գայէրիտէն կէթիլմիշ օլտըրըմ ալեա 2էմէն-տէն թէքրար եէնի եէթիլմիշ օլմալլէ, հէօրմէլթի միւշ թէ-րիլէրիմիշ լէղլէթի բաստըրմա եաթմագ իլիւն պիլզէ միւրաճա-աթ իթմէլի տիրէր:

Վառնա Ուլիցա Յարիպուտ-շօքա № 22

Եղարք Թիւնարձան

ՔԱՋՄԱՎԷՊ

Ազգային, Բանասիրական, Դրական Պատմական Կենսագրական ամսական թիւ 10 ֆր. Հասցէ՝ Rédaction de la Revue „BAZMAVEP“ St. Lazare VENISE (Italie)



Издатель: X Курбетянъ Տպարան «Իրաւունք» Վառնա